- **«Ձայն» վերլուծական տեղեկատվական լրատուն**

  Նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,

- **Լուսաբանել**

  իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:

- **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**

  բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծություններ» ծրագրի շրջանակներում:

- **Ծրագիրն իրականացնում է «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն»**

  ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:

# Ձայն



♦ ՀԱՄԱՐ 16 ♦ ԱՊՐԻԼ, 2006

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

## «Համաշխարհային կոչ ընդդեմ աղքատության»՝ աշխարհի խոշորագույն հասարակական քարոզարշավը

Մեր օրերում նորագույն տեխնոլոգիաներն ու գիտական միտքը մատչելի են դարձնում տեղեկատվությունը մոլորակի տարբեր անկյունների մասին՝ արագ ընդհանրացնելով դրանց համաշխարհային նշանակությունը: Այդուհանդերձ, դժվար է պատկերացնել մի գաղափար, որի շուրջը մեկ օրում հնարավոր լինի համախմբել միանգամից ողջ երկրագնդի 150 մլն մարդ: 2005 թվականին միջազգային և 70-ից ավելի երկրների ազգային հասարակական գործիչների համար այդպիսի գաղափար դարձավ աղքատության դեմ պայքարը՝ որպես հինգ տարի առաջ հռչակված «Հազարամյակի զարգացման նպատակների» (այսուհետ՝ ՀԶՆ) հրամայական:

2000 թվականի սեպտեմբերին ՄԱԿ-ի Հազարամյակի գագաթաժողովում 189 երկիր ստորագրեց Հազարամյակի հռչակագիրը: Ըստ Հռչակագրի, այդ երկրները (այդ թվում նաև Հայաստանը) ստանձնել են մարդու կյանքի բարելավմանն ուղղված հետևյալ ութ նպատակների մինչև 2015 թվականն իրականացման պարտավորությունը.

1. Վերացնել ծայրահեղ աղքատությունը և սովը,
2. Հասնել առաջնային կրթության համընդհանուր մակարդակի,
3. Նպաստել գենդերային հավասարությանը, պաշտպանել կանանց իրավունքները,
4. Նվազեցնել մանկական մահացությունը,
5. Բարելավել մայրական առողջությունը,
6. Պայքարել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ,
7. Ապահովել շրջակա միջավայրի կայուն զարգացում,
8. Մշակել զարգացման գլոբալ գործընկերություն:

Աշխարհի տարբեր երկրների՝ Կանադայից մինչև Բիրմա, Ռուսաստանից մինչև Չիլի, քաղաքացիական հասարակությունների ու առաջատար միջազգային բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչները, համոզվելով, որ ՀԶՆ նվաճման ճանապարհի 5-րդ տարելիցին արդեն իսկ Հազարամյակի նպատակների ձեռքբերումը դատապարտված է անհաջողության, 2005 թվականի սկզբին նախաձեռնեցին «Համաշխարհային կոչ ընդդեմ աղքատության» (այսուհետ՝ ՀԿԸԱ) գլոբալ մի քարոզարշավ: Նպատակ ունենալով վերհիշեցնել մոլորակի գերտերություններին և ՀԶՆ շահառու երկրների կառավարություններին իրենց ստանձնած պարտավորությունները՝ ՀԿԸԱ միջազգային կոալիցիան կարողացավ համախմբել իր գաղափարի շուրջը միլիոնավոր թե՛ աղքատ, թե՛ հարուստ մարդկանց՝ ցույց տալով, որ մտահոգող մի հարցի շուրջ համերաշխությունն ի զորու է ջնջել ցանկացած կազմակերպական, կրոնական, մշակութային կամ այլ անջրպետ:

ՀԿԸԱ միջազգային քարոզարշավն ունի կառավարման իր բարդ և բազմամակարդակ համակարգը: Այսպես, գլոբալ համախմբվածություն և ուղերձների մասնակցային ընդհանրություն ցուցաբերելու համար որոշ պարբերականությամբ կազմակերպվում են տարածաշրջանային հանդիպումներ (օրինակ՝ ՀԿԸԱ-Եվրոպա), որոնց ընթացքում ճշտվում և վերաձևակերպվում են բազմաթիվ մոտեցումներ, մշակվում են քարոզարշավի նոր ռազմավարություններ և գործիքներ:

Աշխարհի գրեթե բոլոր աղքատ երկրներում աշխատող միջազգային կառույցներն ու դրանց տեղական գործընկեր կազմակերպությունները համոզված են, որ չնայած միլիարդավոր դոլարների հասնող վարկերին ու դրամաշնորհներին, կյանքն աղքատ երկրներում չի դառնում ո՛չ ավելի լավ, ո՛չ ավելի ապահով: Հարուստ երկրներն այսօր պահպանում են մի «ստատուս քվո», որ բնութագրվում է անհանդուրժելի անհավասարությամբ. այսօր 20 ամենահարուստ երկրների միջին եկամուտը 37 անգամ գերազանցում է 20 ամենաաղքատ երկրների միջին եկամուտը:

Պատճառներից մեկն այն է, որ աղքատության դեմ պայքարը զուտ տնտեսական և ֆինանսական հարց չէ: Դա նաև եկամուտների և հարստության անարդար բաշխման և անարդյունավետ կառավարման խնդիր է: Օրինակ՝ Հայաստանի բնակչության շուրջ կեսն աղքատ է. չնայած տնտեսական աճի չափազանց բարձր տեմպերի, Հայաստանում առկա է սոցիալական բևեռացում, տնտեսական արդյունքների անարդար բաշխում և հանրային կառավարման մասնակցության ցածր գործակից: Այս խնդիրներն առկա են նաև գլոբալ մակարդակով՝ դժվարացնելով ՀԶՆ նվաճումն աշխարհում:

### Քարոզարշավի նպատակները եւ ուղերձները

Հաշվի առնելով վերը նշվածը՝ քարոզարշավի շրջանակներում իրականացվելիք միջոցառումների գլոբալ նպատակները դարձան՝

- Նպաստել, որ Հռչակագրի ստորագրյալ կառավարություններն անհապաղ միջոցներ ձեռնարկեն ՀԶՆ հասնելու համար,
- Ազդել կառավարությունների, դոնոր հանրության և հզոր միջազգային ֆինանսական հաստատությունների վրա՝ ապահովելու շահառու երկրներում տեղայնացված ՀԶՆ, աղքատության հաղթահարման և այլ ազգային ռազմավարությունների ու քաղաքականությունների ներդաշնակությունը:

ՀԶՆ քարոզարշավի ամփոփ ուղերձներն են.

- Առաջիկա 10 տարվա հեռանկարում ՀԶՆ նվաճումը ձախողվում է:
- Անհրաժեշտ ռեսուրսների և քաղաքական կամքի դրսևորման դեպքում այս նպատակները դեռևս հասանելի են, սակայն դրա համար կպահանջվի կառավարությունների հետևողական քայլերը:
- 2005 թվականը ՀԶՆ նվաճման ուղին վերագտնելու մի շարք անօրինակ հնարավորություններ տրամադրեց. առջևում ունենալով ընդամենը 10 տարի՝ այժմ իսկ հրատապ գործողություններ են անհրաժեշտ:




*Շարունակությունը հաջորդ էջում*

*Սկիզբը նախորդ էջում*

- Անհրաժեշտ է ապահովել ՀԶՆ համապատասխանությունն Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին (ԱՀՌԾ) և պետական բյուջեներին:

Որպես գերակայություններ և դրանցից բխող ուղերձներ վճռվեցին երեք հիմնական խնդիրներ, որ էական ազդեցություն ունեն աղքատության վրա.

1. աղքատ երկրների արտաքին պարտքերի ներումը (ինչը թույլ կտա այս երկրներում հարյուր միլիոնավոր դոլար ծախսել առողջապահության, կրթության և կառավարման բարելավման վրա),
2. արտաքին օժանդակության ծավալների և հասցեականության բարձրացումը,
3. միջազգային առևտրի արդար պայմանների սահմանումը:

Վճռված գերակայությունների հիման վրա էլ կառուցվեց ՀԿԸԱ հզոր կոալիցիան, որի աշխատանքը ներառեց մասնավորապես ՀԶՆ շուրջ ազգային կառավարությունների պարտավորություններին վերաբերող մի շարք հանրային իրազեկման գործողություններ:

## Խորհրդանշանն ու կարգախոսը

Համաշխարհային կոչն ունի իր խորհրդանշանն ու կարգախոսը: Քարոզարշավի մասնակիցները ձեռքին կրում են ճերմակ ժապավեններ՝ ցույց տալով իրենց համերաշխությունը մոլորակին մտահոգող նշված խնդիրներին: Իսկ «Դարձնենք աղքատությունը պատմություն» կարգախոսը թարգմանվել ու ազգային կոալիցիաների կոչն է դարձել արդեն շուրջ 80 երկրներում:

## Հայաստանյան կոալիցիան

2005 թվականի մայիսից ի վեր Հայաստանի ավելի քան 15 քաղաքացիական հասարակության ինստիտուտներ միավորվել են նշված կարգախոսի տակ և կազմում են ՀԿԸԱ միջազգային կոալիցիայի մասը: Հայաստանյան կոալիցիան նպատակ է հետապնդում ազդել աղքատության հաղթահարման թե՛ գլոբալ և թե՛ ազգային գործընթացների վրա:

Հայաստանյան քաղաքացիական հասարակությանն այս քարոզարշավին մասնակից դարձրին հիմնականում Հայաստանում արտաքին օժանդակության ծավալների ու որակի (արդյունավետության) խնդիրները, ինչպես նաև միջազգային առևտրի արդար պայմանների սահմանման խնդիրները: Միժամանակ, կարևորվեց աֆրիկյան ամենաաղքատ երկրներում արտաքին պարտքերի ներման առաջնահերթությունը, որը կայուն հիմք ծառայեց աֆրիկյան աղքատ հասարակությունների հետ համերաշխության մթնոլորտի ստեղծման համար:

Քարոզարշավների մշակույթին բնորոշ խաղաղ քայլերթերից բացի, Հայաստանում հանրային իրազեկմանը նպաստեցին նաև հետազոտական որոշ աշխատանքներ: Մշակվեցին ՀԶՆ հայաստանյան համատեքստում կիրառելի չափորոշիչներ և առաջարկություններ, պատրաստվեցին և հանրության ուշադրությանը ներկայացվեցին նաև վերլուծական նյութեր Համաշխարհային առևտրի կազմակերպությանը Հայաստանի անդամակցության հետևանքների (ընդունված իրավական ակտերի) մասին:

Կարևոր է, որ բոլոր այն առաջարկները, որ այս քարոզարշավի ընթացքում անում է ՀԿԸԱ-ն Հազարամյակի նպատակների ուղղությամբ, հիմնված են տարբեր աղքատ երկրներում ձեռք բերված բազմամյա ծրագրային փորձի վրա, ուստի չեն կարող ապացուցված չլինել և չունենալ իրենց առավելագույն ազդեցությունը միջազգային ասպարեզում գործող հզորագույն երկրների կառավարությունների և միջազգային ֆինանսական հաստատությունների վրա:

## Ճերմակ ժապավենների օրերը

Ինչպես յուրաքանչյուր ազդեցիկ քարոզարշավ, ՀԿԸԱ գլոբալ կոալիցիան 2005 թվականին ընտրեց միջազգային քաղաքական օրացույցի մի քանի առավել ազդեցիկ իրադարձություններ:

2005 թվականի հուլիսի սկզբին Շոտլանդիայում կայացավ «Մեծ ութնյակի» գագաթաժողովը: Հետամուտ լինելով ստանձնած պարտավորությանը՝ տրամադրելու զարգացած երկրների բյուջեների 0.7 տոկոսը միջազգային օգնության նպատակներին՝ այդ օրերին աշխարհի առաջնորդների կայացրած վճիռները կարող էին փոխել միլիոնավոր աղքատ մարդկանց կյանքը: Էդինբուրգ քաղաքում և տասնյակ այլ երկրներում միլիոնավոր ցուցարարներ կոչ արեցին «Մեծ ութնյակի» առաջնորդներին վերջ տալ աղքատությանն ողջ աշխարհում:

Սեպտեմբերի 14-16-ը Նյու-Յորքում կայացավ ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակներին նվիրված գագաթաժողովը: ՀԿԸԱ-ն պահանջեց գագաթաժողովի մասնակիցներից հետամուտ լինել ՀԶՆ-ներին՝ ապահովելով ժողովրդավարական կառավարում, միջազգային առևտրի արդար պայմաններ, մարելով աղքատ երկրների արտաքին պարտքերը և տրամադրելով այդ երկրներին առավել ծավալուն միջազգային օգնություն:

Դեկտեմբերի 13-18-ը Հոնկոնգում կայացավ Համաշխարհային առևտրի կազմակերպության համանախագահների գագաթաժողովը: Այս անգամ քարոզարշավը հյուսեց իր գործունեությունը միջազգային առևտրի պայմանների վերլուծության և հանրային իրազեկման շուրջը:

ՀԿԸԱ Հայաստանյան ազգային կոալիցիան 2005 թվականի «Ճերմակ ժապավենների» օրերին Հայաստանի 7 մարզերում բնակչության ամենաաղքատ խավերի, բարձրակարգ մասնագետների, տեղական ինքնակառավարման մարմինների, նախարարությունների պատասխանատու աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպեց զանազան ակցիաներ, որոնց նպատակն էր զանգվածային համախմբման և հասարակական պահանջի դրսևորման միջոցով ցույց տալ քարոզարշավի հասցեագրած խնդիրների հույժ կարևորությունը: Այդ միջոցառումների շարքում անցկացվեցին խաղաղ երթեր, կլոր սեղաններ և քննարկումներ (այդ թվում և՛ մարզային, և՛ ազգային զանգվածային լրատվամիջոցների ներգրավմամբ), տոնավաճառներ, և այլն: «Ճերմակ ժապավենի» բոլոր օրերին թե՛ Էդինբուրգի, թե՛ Նյու-Յորքի և թե՛ Հոնկոնգի համապատասխան միջազգային ատյաններ ուղարկվելիք նամակ-պահանջների տակ դրվել է 3000-ից ավելի ստորագրություն:

Ահա մի հատված Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) հղած ուղերձից. «...Զարգացող երկրները դժվարանում են կատարել իրենց պարտավորությունները ԱՀԿ-ի հանդեպ: Համաշխարհային կոչ ընդդեմ աղքատությանը միջազգային կոալիցիան և իր հայաստանյան ներկայացուցչությունը համախմբվում են ԱՀԿ համանախագահների հանդիպման օրերին՝ պահանջելով, որպեսզի ԱՀԿ պաշտոնյաները արդար առևտրի հնարավորություն տան երկրագնդի աղքատ երկրներին: Մենք հավատարիմ ենք իրական զարգացման գաղափարին և պնդում ենք, որ ԱՀԿ-ի առաջարկներն ու պահանջները համապատասխանեն արդար զարգացման նպատակներին»:

Այժմ, երբ կոալիցիան կայացած է և ծրագրում է իր գործունեության 2-րդ և 3-րդ տարին (2006 և 2007), խոստովանենք, որ 2005 թվականը քարոզարշավի որոշ շահառու երկրների համար իրոք բեկումնային դարձավ: Մասնավորապես, աֆրիկյան մայրցամաքի 46 ամենաաղքատ երկրներից 18-ի արտաքին պարտքերն ամբողջովին ներվեցին, ինչը թույլ կտա կտրուկ բարելավել այդ երկրների տնտեսական վիճակն ու հատկապես սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը: Անշուշտ, զարգացող պետությունների այստեղ ունեն ստիպական խնդիր. թե ինչպե՞ս վերահսկելի դարձնեն ու արդարացի օգտագործեն ի հայտ եկած միջոցները՝ խուսափելով կոռուպցիայի նոր հարվածներից:

## 2006 թվականի ժամանակացույցը

Արդեն իսկ պլանավորված է 2006 թվականը: Հակառակ նախորդ տարվան, իր քաղաքական օրակարգում այն չունի միջազգային համախմբման բազմաթիվ հնարավորություններ, և ուստի առիթ կտա անդամ ազգային կոալիցիաներին ավելի սերտ աշխատել շահառու երկրների ներքին համատեքստում՝ անդրադառնալով նաև գլոբալ նշանակություն չունեցող, սակայն ազգային մակարդակի համար կենսական խնդիրներին:

2006-ին Հայաստանում ծրագրված է միջոցառումների շարք կազմակերպել.

- Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ՝ քարոզելով ներդնել գործուն ջանքեր ուղղված երեխաների մահացության նվազեցմանը և մայրական առողջության բարելավմանը,
- Հուլիսին՝ գլոբալ քաղաքացիության քննարկման ակումբների և ֆորումների շրջանակում անդրադառնալով կրթության որակի և մատչելիության խնդրին,
- Օգոստոսի 8-ին՝ ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) իրականացման երրորդ տարելիցի կապակցությամբ, մեկ անգամ ևս մեր կառավարությանը և ազգային մակարդակի որոշում կայացնողներին հիշեցնելու համար ԱՀՌԾ վերանայման, գերակայությունների առավել աղքատամետ դարձնելու, ՀԶՆ-ները, այլ ազգային ռազմավարությունները և պետական բյուջեն ներդաշնակեցնելու անհրաժեշտության և հրատապության մասին,
- Հոկտեմբերի 17-ին՝ ՄԱԿ-ի Աղքատության դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ՝ ՀԿԸԱ-ի ընդհանուր ժողովի կողմից ընտրված 2006-ի գլոբալ համախմբման օրվա շրջանակներում,
- Դեկտեմբերի 1-10-ին՝ մարդու իրավունքների տասնօրյակի շրջանակում:

Քանի որ 2007 թվականի քաղաքական համատեքստը մի փոքր անկանխատեսելի է թվում, առայժմ վճռված է գլոբալ համախմբում կազմակերպել 2007թվականի հուլիսի 7-ին: Այդ օրը լրանում է Հազարամյակի զարգացման նպատակների իրագործման ժամկետի (2000-2015) ուղիղ կեսը:

Որպես վերջաբան նշենք, որ ՀԿԸԱ Կոալիցիան շարժուն կառույց է, որը բաց է թե՛ արծարծվող խնդիրների շուրջը նոր մոտեցումների, թե՛ անդամ նոր կազմակերպությունների և գործունեության նոր եղանակների ընդունման առումներով:




ՁԱՅՆ

**Հիմնադիր և հրատարակիչ**
(լրատվական գործունեություն իրականացնող) «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 28-2,
Վկայական՝ 03 Ա 065178,
տրված՝ 28/06/04

Համարը պատրաստվել է՝ Օքսֆամ ՄԲ Հայաստանյան գրասենյակի և ՏԶՀԿ «Բյուջետային վերլուծություններ ի ծրագրի» աշխատակազմի համագործակցությամբ:

**Թողարկման պատասխանատու**
Գագիկ Թորոսյան

**Տպաքանակը**
6000 օրինակ:
Տարածվում է անվճար:

**Հասցե՝**
ՀՀ, ք. Երևան, Տպագրիչների 15-13
Հեռ./ֆաքս: (374 10) 540 289,
www.edrc.am
dzayn@edrc.am

Oxfam